ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄՄՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ (2024 - 25 ՈՒՍՏԱՐԻ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

27.06.2025 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր ռազմավարությամբ և իր գործունեությամբ մշտապես կարևորել է մասնաճյուղում ուսումնական գործընթացների անխափան և հստակ կազմակերպումը, ուսումնառության գործընթացն ապահովել է անհրաժեշտ ռեսուրսներով և մշտապես բարելավել ու զարգացրել է դրանք, տրամադրել է բարձրակարգ կրթություն՝ այդ գործընթացում ներգրավելով Մայր բուհի և մասնաճյուղի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմը, ձգտել է բավարարել իր ներքին և արտաքին շահակիցների պահանջներն ու կարիքները, և ամենակարևորը, մասնաճյուղն իր գործունեությամբ և ձեռքբերումներով ձգտում է դառնալ առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն ո՛չ միայն տարածաշրջանում, այլ նաև Հայաստանում:

Մասնաճյուղի ուսանողակենտրոն գործունեությունն ու թափանցիկ կառավարումը հնարավորություն են տալիս և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցներին մշտապես իրազեկված և տեղակացված լինել բոլոր գործընթացներից, նաև դառանալ դրանց արդյունավետության գնահատման անմիջական մասնակիցներ և իրենց առաջարկներով աջակցել դրանց բարելավմանն ու զարգացմանը: Մասնաճյուղը պարբերաբար անդրադառնում է իր շահակիցների բարձրաձայնած խնդիրներին ու առաջարկներին՝ դրանց լուծման և իրականացման համար պլանավորելով իր հետագա գործունեությունը:

Նշենք, որ մասնաճյուղի կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում տարբեր մեխանիզմներով և ուսումնասիրություններով վեր է հանում շահակիցների կարիքները և խնդիրները, հավաքագրում է նրանց առաջարկները, վերլուծում և տրամադրում համապատասխան ստորաբաժանումներին՝ համապատասխան լուծումներ առաջարկելու համար:

Հերթական ամենամյա ուսումնասիրությունը առցանց հարցման միջոցով իրականացվել է մասնաճյուղի 2024-25 ուստարվա հեռակա շրջանավարտների շրջանում: Հարցման նպատակն էր պարզել շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպումից և իրականացումից, պրակտիկաների կազմակերպումից, մատուցվող

ծառայություններից և ռեսուրսներից, համալսարանական միջավայրից, գնահատման գործող համակարգից, գնահատման օբյեկտիվությունից և այլն:

Հարցումն իրականացվել է անանուն և առցանց, ամփոփիչ ատեստավորման քննությունից հետո, դրանով ապահովելով հարցման օբյեկտիվությունը և առավելագույն անկեղծությունը:

2024-25 ուստարում մասնաճյուղն հեռակա ուսուցման 7 կրթական ծրագրերով տվել է 87 շրջանավարտ, որոնցից հարցմանը մասնակցել է **57-ը,** այսինքն շրջանավարտների **66 %-ը,** որը առցանց հարցումների տեսանկյունից մասնակցության վատ ցուցանիշ չէ:

Հարցմանը շրջանավարտների մասնակցության ցուցանիշներն ըստ կրթական ծրագրերի հետևյալն են.

Կրթական ծրագիր	**ուսան.**	մասն.	տոկոս
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	19	8	42.1%
Հայոց լեզու և գրականություն	12	9	75%
Հոգեբանություն	6	4	66.7%
Պատմություն	13	7	53.8%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	16	11	68.8%
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	12	10	83.3%
Զբոսաշրջություն	9	7	77.8%
	87	**56**	**64.4%**

Մասնակցության ցուցանիշներից ակնհայտ է, որ հարցման արդյունքներն արժանահավատ են, այսինքն յոթ կրթական ծրագրերով ապահովվել է **64.4 %** մասնակցություն և այդ շրջանավարտների պատասխանները կարող են հիմք ծառայել որոշակի եզրակացություններ կատարելու համար:

Ուսումնասիրության մեջ ներառված հարցերը նպատակ ունեն վերլուծելու շրջանավարտների գնահատականը ստացած կրթության, դրա արդյունավետության և ակնկալիքների ապահովման վերաբերյալ:

Հարցման արդյունքներն ընդհանրացված են ըստ կրթական ծրագրերի, միջին որակական գնահատականների, ներկայացված են միջին գնահատականով կամ տոկոսով:

Հարցման շրջանակներում միջին որակական գնահատակի վերաբերյալ շրջանավարտների լրացրած տվյալներից երևում է, որ 2024-25 ուստարվա բակալավրի հեռակա ուսուցմամբ 57 շրջանավարտների 50%-ը (28-ը) ուսումնառությունն ավարտել են 13-20 ՄՈԳ-ով, որոնցից 2-ն ավարտել է գերազանցությամբ, որը հեռակա ուսուցման դեպքում բավականին լավ արդյունք է:



Մասնաճյուղի 57 շրջանավարտների 34%-ը (21-ը) նշել է, որ պատրաստվում է ուսումը շարունակել, ինչը նույնպես զարմանալիորեն հաճելի արդյունք է: Այդ թվում մեծ տեղ են զբաղեցնում «Պատմություն», «Զբոսաշրջություն», «Հոգեբանություն» կրթական ծրագրերի շրջանավարտները:



Հարցման մասնակիցների 51 %-ն արդեն աշխատում է, որից 7 %-ն աշխատում է մասնագիտությամբ, 7 %-ն արդեն կողմնորոշված է աշխատանքի հարցում, 42 %-ը՝ չի աշխատում: Աշխատանքի տեսանկյունից առավել բարձր ցուցանիշներ ունեն «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Հայոց լեզու և գրականություն», «Պատմություն» և «Ֆինանսներ» կրթական ծրագրերը:



Մասնաճյուղում ուսումնառության իրականացումից հեռակա բաժնի շրջանավարտները հիմնականում բավարարված են, մասնավորապես նրանց 60%-ը լիովին բավարարված է ստացած տեսական գիտելիքներից, 53%-ը՝ ձեռք բերած գործնական հմտություններից, 56%-ը՝ ձեռք բերած մասնագիտական կարողություններից:



Եվ ինչպես միշտ, մեր շրջանավարտները բավարարված չեն մասնաճյուղում օտար լեզվի իմացության ապահովումից, նրանց միայն 36%-ն է լիովին բավարարված: Հետևաբար, ուսումնառության կազմակերպման գործում անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել օտար լեզուների իմացության ապահովմանը: Մասնավորապես «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի համար:

Գնահատման գործող համակարգից, օբյեկտիվությունից և թափանցիկությունից նույնպես ուսանողների բավարարվածությունը բարձր է: Բավարարվածության առավել բարձր արդյունքներ ունենք պրակտիկաների վերաբերյալ, դրանց օգտակարությունից բավարարված է հարցմանը մասնակցած շրջանավարտների 87%-ը: Չի զիջում նաև մատուցվող դասընթացների օգտակարությունից բավարարվածության ցուցանիշը՝ 82 %:



Ամփոփիչ ատեստավորման աշխատանքների կազմակերպումից երեք ֆակուլտետի համար ընդհանուր միջին գնահատականը գերազանցել է 4.6 միավորը, մասնավորապես Տնտեսագիտության և բնական գիտությունների ֆակուլտետների համար՝ 4.8 միավոր, իսկ ահա հումանիտար գիտությունների ֆակուլտետի համար՝ 4.3 միավոր:



Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները շրջանավարտների պատրաստվածությունը և ներկայացումները գնահատել են լավ: Մասնաճյուղի համար ամփոփիչ ատեստավորման աշխատանքների կազմակերպումից ընդհանուր միջին գնահատականը կազմել է 4.4 միավոր:

Ավարտական աշխատանքի գիտական ղեկավարից բավարարվածությունը մասնաճյուղի շրջանավարտները գնահատել են միջինում 4.8 միավոր: «Ֆինանսներ» կրթական ծրագրի շրջանավարտները գնահատել են 5.0 միավորով, «Պատմություն», «Զբոսաշրջություն»՝ 4.9, «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Հայոց լեզու և գրականություն»՝ 4.8, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»՝ 4.5, «Հոգեբանություն»՝ 4.3: Ամենացածր միջին գնահատականը «Հոգեբանություն» կրթական ծրագրինն է:



Արդյունքում ըստ ֆակուլտետներում իրականացվող կրթական ծրագրերի ֆակուլտետներում միջին միավորը կազմել է. բնական գիտությունների ֆակուլտետում (ԻԿՄ կրթական ծրագիր)՝ 4.75, տնտեսագիտության ֆակուլտետում («Ֆինանսներ», «Զբոսաշրջություն»)՝ 4.94 միավոր, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ (ՏՄՄ, ՀԼԳ, Պատմություն, Հոգեբանություն)՝ 4.65 միավոր:

Շրջանավարտները հիմնականում բավարարված են մասնաճյուղի հետևյալ ռեսուրսներից վիճակից, մատչելիությունից. լսարանների՝ 63%, 55%, 56%, համակարգչային սրահների՝ 75%, 77%, 72%, համացանցի՝ 75%, 67%, 56%:



Գրադարանում առկա մասնագիտական գրականությունից, ընթերցասրահի սպասարկումից և էլեկտրոնային գրադարանից բավարարվածությունը հիմնականում գնահատվել է լավ. նրանց համար ըստ բոլոր ֆակուլտետների բավարարվածությունը եղել է 67%-ից մինչև 98%:





Մասնաճյուղի ղեկավարությունից, Ֆակուլտետի ղեկավարությունից և պրոֆեսորադասախոսական կազմից շրջանավարտների բավարարվածությունը գնահատվել է բավականին բարձր: Այդ ցուցանիշները բոլոր ֆակուլտետների համար կամ կազմել է 100%, կամ գրեթե 100%: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել հումանիտար գիտությունների ֆակուլտետի արդյունքներին, որոն բոլոր ցուցանիշներով ցածր են 90%-ից:

Առաջարկում ենք հումանիտար գիտությունների ֆակուլտետում նախապես ուսումնասիրել հաջորդ ուստարվա 4-րդ կուրսի ուսանողների (եթե հնարավորություն կա, նաև այս շրջանավարտների) կարծիքները մասնաճյուղի ղեկավարության, ֆակուլտետի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ՝ պարզելու համար հնարավոր խնդիրները, որոնք հետագայում կարող են ֆակուլտետի համար գրանցել նույնատիպ արդյունք:



Ուսանողական կառույցներից, ուսանողների դիմումներին և բողոքներից արձագանքման ընթացակարգից բավարարվածությունը նույնպես բարձր է: Այստեղ նույնպես ընդգծված ցածր է հումանիտար գիտությունների ֆակուլտետի ցուցանիշը: Սա նշանակում է, որ 2025թ.-ի այդ ֆակուլտետի հարցմանը մասնակցած 31 շրջանավարտների մոտ (կամ միգուցե ընդհանրապես) որոշակի խնդիրներ են եղել կապված և՛ ուսումնառության, և՛ ղեկավարման, և՛ այլ գործընթացների հետ կապված, ինչը անդրադարձել է նրանց գնահատականների վրա:



Ներքևում ներկայացված գծապատկերներից երևում է, որ մասնաճյուղի կողմից կոռուպցիոն ռիսկերի նվազման և կոռուպցիոն երևույթների դրսևորման բացառման համար իրականացվող աշխատանքները արդարացված են:



Այստեղ նույնպես հումանիտար գիտությունների ֆակուլտետում գրանցվել է արդյունք, որը թեպետ մեծ թիվ չէ (31 շրջանավարտների 3%-ը՝ 1 շրջանավարտ), սակայն ահազանգում է այդ վտանգավոր երևույթի առկայության մասին:



Հարցման մասնակից շրջանավարտները նշել են, որ ԵՊՀ ԻՄ-ում մասնավոր պարապմունքների համար գումար չեն վճարել:



ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցի պատասխանը ունի հետևյալ պատկերը. բնական գիտությունների ֆակուլտետի շրջանավարտներն իրենց ստացած կրթությունը գնահատել են 4.6 միջին միավորով, տնտեսագիտության ֆակուլտետի

շրջանավարտները՝ 4.4 միավորով, իսկ ահա համեմատաբար ցածր է նորից հումանիտար գիտությունների ֆակուլտետի ցուցանիշը՝ 4.3 միջին միավոր:



Հարցման մասնակից շրջանավարտների 96 %-ը նշել է, որ խորհուրդ կտա իր մերձավորներին կրթություն ստանալ ԵՊՀ ԻՄ-ում:



Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի ուժեղ կողմեր ավելի շատ նշվել են դասախոսների մասնագիտական և մարդկային որակների մասին, մասնավորապես.

- Հաճելի և սիրված դասախոսներ, ջերմ միջավայր,
- Ջերմություն, հարգալից վերաբերմունք, պրոֆեսիոնալ մոտեցում աշխատանքին,
- ուսանողներին տեղեկատվությունը մատուցելու դասախոսների բարձր ունակություն, նրանց բարձր որակավորումը և բարությունը,
- Խստապահանջություն, կարգապահություն, ուսման նկատմամբ պահանջկոտություն,
- Դասախոսների իմացության բարձր մակարդակ,

- Լավագույն, գերազանց դասախոսական անձնակազմ,
- Երևանից հաճախող դասախոսներ, նրանց կողմից գիտելիքների նվիրված փոխանցում:

Նաև նշվել են ընդհանուր մասնաճյուղի հետևյալ ուժեղ կողմերը.

- գիտելիքի, պրակտիկայի, փորձի ձեռքբերում,
- լավ կրթական ծրագրեր,
- հագեցած գրադարան,
- կազմակերպվածություն, խնդիրների լուծման արագություն,
- հիանալի ուսուցում և հրաշք ղեկավարություն,
- մասնաճյուղի գտնվելու վայրը, վճարի չափ, զեղչային համակարգ:

Որպես թույլ կողմեր նշվել են.

- անպարտաճանաչ ուսանողներ,
- լսարանների քանակի քչություն, կահավորում, լսարաններ ոչ բորվոք վիճակ,
- ուսանողին ընդունում են որպես աշակերտ,
- ինտերնետի անհասանելիություն,
- աշխատակիցների սակավություն, կազմակերպչական աշխատանքների ցածր մակարդակ,
- ոչ բավարար ուշադրություն հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողներին, մասնավորապես, նրանք չեն ներառվում կազմակերպվող միջոցառումներին, սեմինարներին,
- հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների սակավություն,
- որոշ առարկաների դասավանդման համար մասնագետների պակաս
- մանկավարժի որակավորման բացակայություն որոշ մասնագիտությունների համար,
- ոչ խստապահանջ մոտեցում դասերից ուսանողի բացակայության նկատմամբ,
- ուսանողների պասիվ վերաբերմունք կրթությանը,
- տեխնիկայի պակասություն,
- մասնագիտական գրքերի ոչ բավարար քանակ / բացակայություն:

Մասնաճյուղում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման բարելավման համար շրջանավարտներն առաջարկել են.

- ուսանողին վերաբերվել որպես հասուն մարդու, անցնել ավելի ժամանակակից մեթոդաբանության,

- այլ համալսարաններից ևս հրավիրել դասախոսներ,
- ուշադրություն դարձնել ուսանողի պարտաճանաչությանը և դասերին պարտադիր ներկայությանը,
- շատ ցածր գիտելիքներով ուսանողները (տարրական նախադասություն անգամ անսխալ չեն կարողանում գրել) չստանան նույն դիպլոմը,
- 0.26 միավորով գերազանցության դիպլոմից զրկվելու պարագայում թույլ տալ վերահանձնել որոշ քննություններ,
- ավարտական աշխատանքի պաշտպանության ժամանակ հանձնաժողովի կազմում լինեն հավասար թվով և՛ մաթեմատիկներ, և՛ լեզվաբաններ (ՏՄՄ),
- չկան շատ մագիստրոսական կրթական ծրագրեր, անհրաժոշտ է ներդնել նոր մագիստրոսական կրթական ծրագրեր,
- մասնաճյուղում ներդնել նոր կրթական ծրագրեր (նոր մասնագիտություններ ձեռք բերելու համար)։

Որոշ շրջանավարտներ առաջարկների հետ միասին նաև շնորհակալություն են հայտնել մասնաճյուղին։

Կրթական բարեփոխումների և որակի ապահովման բաժին